# ՀՈՐԹԵՐԻ ՄԿՆԱՏԱՄԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Մկնատամը սնկային վարակիչ հիվանդություն է, որը կենդանուց անցնում է նաև մարդուն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ժամանակին վակցինացնել կենդանիներին:

Հարուցիչը կարող է լինել գրեթե ամենուր՝ ծղոտում, գոմաղբում, անասնաշենքերում, կրծողների վրա և այլն: Բավական կայուն է տարբեր բացասական գործոնների նկատմամբ.

- անասնաշենքում և հարակից տարածքներում կարող է պահպանվել 6-8 տարի
- վարակված մաշկի վրա՝ 4-7 տարի
- գոմաղբում և գոմաղբահեղուկում՝ 3-8 ամիս
- վարակված կերի մեջ՝ 4-8 տարի

Սակայն անկայուն է արևի ուղիղ ճառագայթների նկատմամբ՝ ոչնչանում է 1 ժամից:

Հետևաբար պետք է ապահովել արևի ճառագայթների մուտքը դեպի անասնաշենք:

Հիվանդությունն առկա է տարվա ցանկացած եղանակներին, բայց առավել հաճախ՝ ձմռան--գարնան ամիսներին



Ցանկացած հասակային խմբի ԽԵԿ ընկալունակ է մկնատամի նկատմամբ, սակայն առավել հաճախ և ծանր ձևերով հիվանդանում են 2 ամսականից մինչև 1 տարեկան հորթերը:

Կլինիկական նշանները, որոնք հիմնականում ի հայտ են գալիս կենդանու բերանի, աչքերի, ճակատի, պարանոցի, մեջքի հատվածներում, նկատվում են մազաթափված կամ մազերը հիմքից կտրված, վերքանման, թեփակալված, կեղևակալված, երբեմն էլ թարախակալված խոցային մակերեսների տեսքով, որոնք սկզբում լինում են փոքր, բայց աստիճանաբար միանալով իրար, ախտահարում են մեծ մակերեսներ:

## ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է

- 14 օրական հասակից սկսած վակցինացնել հորթերին **ԼՏՖ-130 վակցինայով**
- անասնաշենքերում ապահովել արևի մշտական մուտքը
- որպես ցամքար օգտագործվող ծղոտը բերել ապահով վայրերից
- տարեկան գոնե 2 անգամ անցկացնել **գոմեղի ախտահանում**
- պայքարել կրծողների դեմ




ԼՏՖ-130 վակցինան օժտված է բարձր իմունածնությամբ և բուժիչ հատկությամբ: Ամենածանր ախտահարման դեպքում էլ կենդանու մոտ 3-րդ ներարկումից հետո արդեն ի հայտ են գալիս առողջացման նշանները:

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

**Swiss Cooperation Office**
**South Caucasus**

SDA Strategic Development Agency
Strategies for Development

«ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ»
"LIVESTOCK DEVELOPMENT IN THE SOUTH OF ARMENIA"